

Թ Ի Ի 15

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՁԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԺԵ.

20 Մեպտեմբեր 1913



Տպագրութիւն Տ. ՅՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի ձառտէտի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
2. Տ. Վահրամ » Մանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կէզիրեան
- 4.

(Բ. Վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բէրտաշեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան

(Գ. Վիճակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Հազարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշնեան

(Դ. Վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. քհնյ. Զիլվէնեան
14. Տ. Խորէն » Յարութիւնեան
15. Տ. Յուսիկ » Քաշունի
16. Տ. Տանատ » Փաշայեան

(Ե. Վիճակ)

17. Տ. Եզնիկ Ծ. Վ. Պապանեան
18. Տ. Շմայեակ Քահ. Էքսէրեան
19. Տ. Բարթող » Թագրմէեան
20. Տ. Աբէլ » Երէցեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Էյուպ Ս. Եղիա

21. Օննիկ էֆ. Մինասեան

Խասագիւղ

22. Պետրոս էֆէնտի Հալաճեան
23. Պետրոս » Խօրասանեան
- 24.

Մագրիգիւղ

25. Երուանդ էֆէնտի Պէյազեան
26. Թագուր » Արեւեան
27. Տօքթ. » Մալխասեան
28. Յակոբ » Պոյաճեան
29. Յովհաննէս » Իսապուլեան
30. Սարգիս » Պէյրէկեան
- 31.

Պէտլիքաբերէ

32. Արշակ էֆէնտի Ալպոյանեան
33. Յովսէփ » Գազազեան

Սան-Սթեփանո

34. Գէորգ էֆ. Ասլանեան

Օրթագիւղ

35. Խ սչիկ էֆէնտի Սըվաճեան
36. Տպլ. Ստեփան էֆէնտի Թէրզեան

(Բ. Վիճակ)

Բերա-Գասը Էփաշա

37. Աստուածատուր էֆէնտի Էաշատրեան
38. Արամ » Շալաճեան
39. Արմենակ » Բալսեղեան
40. Գէորգ » Թորգմեան
41. Գիգոր » Շահլաճեան
42. Յովհաննէս » Չէօկիւլեան
43. Սարգիս » Մինասեան
44. Տր. Վ. » Թորգոմեան
45. Յտեփան » Գարսեան

Գարթալ-Գնալը

- 46.

Գուրուջէշմէ

- 47.

Պէշիկթաշ

48. Տրդատ Պէյ Տատեան

Ֆէրիգիւղ

49. Եղուարդ էֆէնտի Գարակէօզեան
50. Հրանտ » Ասատուր
51. Մարկոս » Նաթանեան
52. Յակոբ » Պահրի

(Գ. Վիճակ)

Գատրգիւղ

53. Անտոն էֆէնտի Թալազ
54. Աղասի » Ալասեան
55. Եղուարդ » Շիրինեան
56. Ներոէս » Օհանեան
57. Մկրտիչ » Աբգարեան
58. Պեննէ » Թորոսեան
59. Սարգիս » Էսմէրեան

Եէնի-գարու

60. Պենոն էֆէնտի Տէյրմէնեան
61. Վահան » Փափազեան

Պալաթ

62. Տօքթ. Կարապետ էֆէնտի Եղուպեան
63. Յարութիւն էֆ. Մոստիլեան
64. Սարգիս » Սրենց
65. Հրանտ » Անդրէասեան

Սկիւտար Եէնի-մահալէ

66. Թորգոմ էֆէնտի Պոյաճեան
67. Հմայեակ » Խոսրովեան
68. Վահան » Սուրենեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ ԺԵ.

20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1913

Ն Ա Խ Ա Գ Ա Հ. — ՊՍՏՐ. ՏԵՂԱՊՈՒ Հ Տ. ԳԱԲՐԻԷԼ ՍՐԲՍՁԱՆ

Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ. — ՏՐ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ


- 1.—Ընտրութիւն Քաղ. ժողովոյ երկու անդամոց:
- 2.—Քննութիւն հիմնական նախագծի կանոնագրի Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանուց. (Շարունակութիւն վիճարանութեան):
- 3.—Տեղեկագիր Ասեմապետաց Դիւանի ի մասին քրահայոց կողմէ Ամենայն Հայոց Հայրապետին մատուցանելի գրին:
- 4.—Հարցապնդում ի մասին Գարամանեան ԷՔէնսիի սպանութեան:
- 5.—Տեղեկագիր խորհրդարանական Յանձնաժողովոյ ի մասին հանգուցեալ Երեցեան Սրբազանի ամբաստանութեանց:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎ ՈՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը եւ ժամը Յին ատեանը բացուեցաւ Ներկայութեան 50 երեսփոխաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 65ի:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այսօրուան նիստէն ճամբորդութեամբ, հիւանդութեամբ եւ անձնական կարեւոր գործերու պատճառներով իրենց բացակայութիւնը հաղորդած են Տ. Միքայէլ քհնյ. Աշնեան, Տօքթ. Թորգոմեան, Տօքթ. Եղուպեան, Ե. Շիրին-



Կան, Յ. Գաղազեան, Պ. Հալաճեան, Պ. Խօրասանճեան եւ Տ. Նազաչեան էֆէնտի- ները, կ'արձանագրենք զիրենք օրինաւոր բացակայ:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՈՒԹԵՆԷՆԷ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Մեր պաշտօնակից- ներէն Սմբատ Քեաթիպեան էֆ. անձնա- կան գործոց պատճառաւ եւ Գէորգ էֆ. Մեծատուրեան գաւառի մէջ պաշտօնի կոչուած ըլլալով՝ հրաժարած են երեսփո- լանութենէ, աւասիկ իրենց հրաժարա- կանները:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ հրաժարագիրները).

Գեր. Գաբրիէլ Էպոս. Ճէվահիրճեան, Պատր. Տեղապահ եւ նախագահ՝ Ազգային ընդհանուր ժողովոյ Սրբազան Հայր,

Անձնական զբաղմանցս պատճառաւ չի կարենալով կատարել Երեսփոխանի պար- տականութիւններս, հրաժարելու հարկադ- րուած եմ, ուստի կը խնդրեմ հաճիք ներ- կայ հրաժարականս ուղղել Ազգային ժո- ղովոյ Դիւանին՝ մատուցուելու համար սոյն ժողովոյ:

Ամենախորին յարգանքք
Ս. Մ. Քեաթիպեան

Վսեմաշուք

Տօքթ. Ն. էֆ. Տաղաւարեան

Պատ. Ատենապետ Ազգ. Երեսփ. ժողովոյ Վսեմ. Տէր,

Կարնոյ Կուսակալութեան Դատական քննիչի պաշտօնին ընտրուած եւ այս օրերս մեկնելու պարտաւորուած ըլլալով, ներ- կայիւս կուգամ իմ հրաժարականս մատու- ցանել Տիվրիկի Ազգ. Երեսփոխանութենէ, եւ խնդրել՝ որ նոր ընտրութեան համար հարկ եղած հրահանգը տալու բարեհաճու- թիւնը ունենաք:

Մնամ յարգանքք

Հրաժարեալ Երեսփոխան Տիվրիկի
Գ. Մեծասուրեան

(Ատենապետ էֆ. սոյն հրաժարականն է- րը առանձին առանձին բուէի դնելով մե- ծամասնութեամբ ընդունուեցան):

ՀԱՐՑՈՒՄ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

Ա.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ճանկրելեան էֆ. հարցում մը ունի ձեր նկատողութեան կը յանձնեմ:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը).

Ազնուաշուք

Ատենապետ էֆ. Ազգ. Երեսփ. ժողովի Ազնուաշուք Տէր

Ասկէց երկու ամիս առաջ Վանայ գա- ւառական ժողովի Ատենապետի մասին հարցում մը ըրած էի. ժողովը որոշեց ղրկել Վարչութեան:

Վարչութիւնը մինչեւ օրս այս մասին որ և իցէ պատասխան մը չտուաւ, ինչո՞ւ:

Ազգ. Երեսփոխան
Յ. Կ. Ճանկրելեան

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ.— Սյդ խնդիրը քըն- նութեան ներքեւ ըլլալով՝ արդիւնքը պիտի հաղորդենք ժողովիդ:

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ.— Խնդիրը հոս կը քննուի՞ թէ տեղւոյն վրայ:

ՏՕՔԹ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.— Խնդրոյն քննութիւնը մեր նախաքննիչ գիւանին յանձնուած է, որուն տեղեկագրութեան համեմատ արդիւնքը պիտի բերուի ժողո- վիդ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ո՞րչափ ատենէն պիտի դայ:

Ս. ԳԱՐԱՆԱՆ ԷՖ.— Երկու երեք շա- բաթէն:

Բ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Մեր պաշտօնակից- ներէն Չաքարեան էֆ. ալ գիր մը ունի, այն ալ ձեր ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը).

Ազգ. ժողովի Մայր Դիւանին Կուգամ Պատկ. Ազգ. Կեդր. Վարչու- թիւնէն հարցնել թէ՞ օրինական ի՞նչ հիմն- քով վրայ յենլով Սեբաստիոյ եւ Արար- կիբի առաջնորդներու գաւառ, ժողովներու

կողմէ ընդունուած հրաժարագիրներու հա- կառակ հրահանգ տուած է որ նոյն Առաջ- նորդները իրենց պաշտօնը շարունակեն իբր Առաջնորդ:

Ազգ. Երեսփոխան
Ն. Մ. Չաքարեան

Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.— Յանուն Վարչու- թիւն կուգամ պատասխանել այս հարց- ման թէ՞ յիշուած Առաջնորդներու հրա- ժարականի բուն պատճառները Վարչու- թիւն անձանթ կը մնան, եւ ընականա- բար, մինչեւ որ Վարչութիւնը չտեղեկա- նար թէ ի՞նչ են այդ հրաժարականներուն տեղի տուող պատճառները, չէր կրնար առաջնորդական նոր ընտրութեան հրա- հանգ տալ, եւ միւս կողմէ, որպէս զի վի- ճակային գործերը երեսի վրայ չմնան, յանձնարարեց որ մինչեւ մանրամասնու- թեանց հաղորդուիլը եւ հրաժարականնե- րուն կեդրոնին կողմէ ընդունուիլը, շա- րունակեն իրենց պաշտօնը: Իսկ Սեբաս- տիոյ Առաջնորդին հրաժարականին տեղի տուող պատճառներուն համար՝ բացատրու- թիւն պահանջիցինք Սեբաստիոյ Գաւառ. վարչութիւնէն, մինչեւ ամիս մը կը պա- տասխանենք ժողովիդ:

Ն. ՉԱՔԱՐԵԱՆ ԷՖ.— Վարչութեան կողմէ տրուած բացատրութիւնը չեմ կրնար գոհացուցիչ նկատել: Հրաժարած եւ հրաժարականը ընդունուած Առաջնորդ մը չկրնար իր պաշտօնը շարունակել. հե- տեւաբար, Վարչութեան կողմէ տրուած հրահանգը ոչ միայն օրինական չէ, այլ եւ նպատակայարմար ալ չէ, որովհետեւ այդ Առաջնորդներու պաշտօնին շարունակու- թիւնը երկպառակութեան զուռ պիտի բանայ եւ պիտի ստեղծէ պատասխանա- տուութիւններ, որոնք չեմ կարծեր թէ Վարչութիւնը ընդունի:

ՏՕՔԹ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.— Սեբաս- տիոյ Առաջնորդին հրաժարականը չունինք մեր սեղանին վրայ. հետեւաբար, պէտք է տեղեկագիրներուն սպասենք: Վարչու- թիւնը հետագիբ մը միայն ստացած է Առաջնորդին հրաժարականի մասին, եւ

պէտք զգացած է քննելու թէ ինչ պատ- ճառներէ ծագում առած է այն, միւս կողմէ, վիճակային գործերը կարելի չըլ- լալով թողուլ երեսի վրայ, հրահանգ տրուեցաւ Առաջնորդին որ շարունակէ իր պաշտօնը, եւ Գաւառ. ժողովէն տեղեկու- թիւն ուզուեցաւ:

Գ. ՉՉՐԱՊ ԷՖ.— Չենք կրնար ժա- մավաճառ ըլլալ այսպիսի խնդիրներով:

ԳԵՂԱՄ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԷՖ.— Ես կրնամ քիչ մը աւելի բացատրութիւն տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Հարկ չկայ այլեւս խնդիրը երկարելու, քանի որ Վարչու- թեան անդամները կ'ըսեն թէ իրենց առած տեղեկութիւնը պիտի հաղորդեն ժողովիս՝ այսօր այդ մասին ըսուելիքները մասնաւոր լուսաբանութիւն մը չեն կրնար տալ մեզի, ուրեմն կը սպասենք մանրա- մասնութեանց:

Տ. ԵՉԵԻԿ Ծ. ՎՐԴ. ՊԱՊՍԵԱՆ.— Քիչ առաջ երկու Երեսփոխաններու հը- րաժարականները ընդունուեցան, կառա- ջարկեմ որ հրահանգ տրուի անոնց տեղ անմիջապէս նորեր ընտրելու, ասկէ զատ Չեր ուշադրութեան կը ներկայացնեմ տա- րի մ'առաջ Երեսփոխան ընտրուած Տ. Անանիա վրդի. խնդիրը, որ երեսփ. ժո- ղովիդ որոշմամբ նախաձեռնութեան դի- ւանին յանձնուած է, այդ մասին ո եւ է կարգադրութիւն եղած չըլլալով՝ յիշեալ Վարդապետն ալ իր երեսփոխանական ի- րաւունքէն զրկուած է, այս կէտերը ժո- ղովիդ ուշադրութեան կը յանձնեմ, որ- պէտքի պակասեալ անդամներուն տեղ նո- րերը կարողանանք ունենալ:

Վ. ՍԷՐԷՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ.— Քանի որ Երեսփոխանաց թիւը ամբողջացնելու վրայ կը խօսուի, ես ուղղակի կամբաստանեմ Դիւանը, որ հակառակ Բերայի երեսփո- խաններու ընտրութեան տեղեկագիրը ստացած ըլլալուն՝ ժողովին չ'ներկայցնէր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դիւանը ամբաս- տանելու մասին Չեր ըրած յայտարարու-

Թիւնը կը մերժեմ. Դիւանիս վրայ Բերայի ընտրութեան մասին ո եւ է տեղեկագիր չկայ:

Ա. ԳՍՍՊԱՐԵԱՆ ԷՖ.— Բաղ. Ժողովը իր տեղեկագիրը պատրաստած եւ Ազգ. Ժողովին յղած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այդ գիրը Բաղ. Ժողովի Դիւանին մէջ փնտոցեք. այս տեղ եկած ո եւ է գիր Ժողովին կը ներկայացուի, մանաւանդ երբ խնդիրը կը պատկանի, երեսփոխանական վաւերացման որ Ժողովին կազմը ամբողջացնելու խնդիր է:

(Այս միջոցին Բաղ. Ժողովոյ Դիւանին կողմէ կատարուած քննութեամբ հասկըցուեցաւ որ այդ տեղեկագիրը ձեւակերպութիւնները լրացնելու համար. Բաղ. Ժողովոյ քարտուղարութեան քով մնացած է, հետեւաբար այդ պահուն Ժողովին բերուելով Ատենադպիր էֆ. կարգաց զայն):

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփ. Ընդհանուր Ժողովոյ Մայրաքաղաքիս Բերա-Գասըմ Փաշա միացեալ Թաղերէն Բ. վիճակաւ դադարեալ ինն երեսփոխաններու տեղ՝ ըստ հրահանգի Պատրիարքարանիս, նոր ընտրութիւն կատարուած եւ Սեպտ. 3 թուականաւ տեղեկագրով ներկայացուած է արդիւնքը, յորմէ կը տեսնուի թէ՛ քուէից բացարձակ առաւելութեամբ ազգային երեսփոխան ընտրուած են.

1. Ազն. Արամ էֆ. Հալաճեան
2. » Աստուածատուր էֆ. Խաչատրեան
3. » Արմենակ էֆ. Բարսեղեան
4. » Գէորգ էֆ. Թորգոմեան
5. » Գրիգոր էֆ. Շահլամեան
6. » Յովհաննէս էֆ. Չէօկիւրեան
7. Վսեմ. Ստեփան էֆ. Գարսեան
8. Ազն. Սարգիս էֆ. Մինասեան
9. » Տօքթ. Վահրամ էֆ. Թորգոմեան

Նոյնպէս, Գատըգիւղի Թաղէն պակասեալ երկու երեսփոխաններու տեղ՝ ըստ հրահանգի, նոր ընտրութիւն կատարուած

եւ Օգոստոս 7 թուականաւ մատուցուած է տեղեկագիրը, յորմէ կը տեսնուի թէ՛ քուէից բացարձակ առաւելութեամբ ազգ. երեսփոխան ընտրուած են.

1. Ազն. Տօքթ. Մկրտիչ էֆ. Արգարեան
2. » » Պէննէ » Թորոսեան

Եւ թէպէտ այս ընտրութեանց առթիւ թէ՛ Բերայի եւ թէ՛ Գատըգիւղի ընակիչներէն ոմանց կողմէ բողոքներ եղան ընտրական գործողութեանց օրինաւորութեան դէմ, այլ սակայն Բաղաքական Ժողովս նկատողութեան առնելով այդ բողոքներն՝ հաստատեց թէ անոնք չեն կրեր որ եւ է օրինական պատճառ բեկանելու կատարուած ընտրութիւններն. Հետեւաբար, Բաղաքական Ժողովս Սահմանադրութեան 81րդ յօդուածին տրամադրութեան համաձայն ստուգելով կատարուած ընտրութեանց օրինաւորութիւնն եւ նորընտիր երեսփոխաններու ընտրելութեան պայմաններն, կը փութայ ընդ գրոյս Պատկառելի Ժողովիդ մատուցանել ընտրական տեղեկագրերը:

Մնամք յարգանք
Ի դիմաց Բաղաքական Ժողովոյ
Ատենադպիր Վ. Ատենապետի
Ա. Յ. Գասպարեան Տ. Ներսիսեան

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.— Խօսելիքս ընտրուած երեսփոխաններու չվերաբերիր, այլ Վարչութեան ընդունած այն դրութեան որուն համեմատ, ընտրութեան դէմ եղած բողոք մը, կը զրկուի ընտրողական Ժողովին եւ անկէ ստացուած պատասխանը բաւական կը համարուի Ասիկա, կը յիշեցնէ ինձի, կառավարական այն դրութիւնը, որուն համեմատ երբ բողոք մը ըլլայ կուսակալի մը կամ կառավարիչի մը դէմ, բացատրութիւն կը պահանջէ անկէ որուն դէմ եղած է այս բողոքը, եւ անոր տուած պատասխանին համաձայն կը հերքէ բողոքին շարժառիթը. ըստ իս, պէտք է, Բաղ. Ժողովը բողոքները իւրացնելով՝ ինք դատաւոր կանգնի, լսելով երկու կողմն ալ, եւ քննելով թէ բողոքները օրինաւոր են թէ չէ:

Ա. ԳՍՍՊԱՐԵԱՆ ԷՖ.— Ընտրական գործողութեան մը առթիւ, նախ պէտք է կայ լսելու ընտրող մարմինը: Բաղ. Ժողովը անոր տուած բացատրութիւնները կը քննէ եւ երբ բաւարար չգտնէ, այն ատեն քննիչ կը զրկէ, թողունք որ Բերայի ընտրութեան միջոցին, Վարչութեան պատուիրակը ներկայ էր, ուր ստորագրած է ընտրական տեղեկագիրը, բողոքներ եղան, բացատրութիւն ուղեցինք, եւ տեսանք որ անոնք օրինական հիմ չունին, ընդհանուր կերպով՝ գործադրուած դրութիւնը այս է:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.— Առանց փափաքելու զբաղեցնել Ժողովը այսպիսի խնդրով՝ հարկ կը զգամ սակայն կրկնելու վերստին քիչ առաջ ըսածներս, նոյն իսկ Վարչութեան ներկայացուցչին տուած բացատրութիւններէն յետոյ, որոնք ըսածներս կը հաստատեն Գասպարեան էֆ. կ'ըսէ որ եթէ տեղի ունեցած բողոքի մը դէմ՝ ընտրողական Ժողովի մը տուած բացատրութիւնը բաւական համարուի այլեւս քննութիւն չկատարուիր: Ես ճիշտ այս սկզբունքին դէմ է որ կուզեմ խօսիլ, որովհետեւ, ինչ որ չենք ուզեր որ պատահի մեր արտաքին կեանքին մէջ, նոյնը պէտք չէ գործադրենք մեր ներքին կեանքին մէջ, Վարչութիւնը, ընտրական գործողութեան մը դէմ եղած բողոքները պէտք է լսէ, եւ առանց բողոքողները լսելու չ'կրնար տեղեկագիր բերել հոս, որովհետեւ բողոքին տեղի տուող պատճառները երեւան հանելու համար, բողոքողներու լսուիլը խիստ կարեւոր պարագայ է: Վարչութեան կատարած այս կերպ գործողութիւն մը, Ազարուրիս ձեւէն անդին չ'անցնիր:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.— Խօճասարեան էֆ. կարծեմ թիւրբմացութեան մէջ կը գտնուի, եթէ, ամբաստանութիւն ըլլայ, ոչ թէ ընտրողական Ժողովի պատասխանը բաւական կը սեպէ այլ արդարութիւնը գործադրած ըլլալու համար, քննիչներ կը զրկէ, եւ կըստուգէ իրողութիւնը:

Դուք կը պահանջէք որ ընտրողական Ժողովը չ'լսուի. սակայն, Վարչութիւնը անոր պատասխանը ստանալէն յետոյ բողոքները նկատի կ'առնէ. եւ նոր քննութիւն կը կատարէ եթէ պէտք տեսնայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սկզբունքի խընդրոյն համար կարծեմ այսչափ բաւական է, գալով կատարուած ընտրութեանց անոնք Ձեր քուէին կենթարկեմ:

(Ատենապետ էֆ. Բերայի եւ Գատըգիւղի ընտրութիւնները Ժողովին վաւերացման ենթարկելով՝ ձեռամբարձ հաւատութեամբ վաւերացան սոյն երկու ընտրութիւններն ալ, եւ Բերայէ երեսփոխան հռչակուեցան Տեարք՝

- Աստուածատուր Խաչատրեան
- Արամ Հալաճեան
- Արմենակ Բարսեղեան
- Գէորգ Թորգոմեան
- Գրիգոր Շահլամեան
- Յովհաննէս Չէօկիւրեան
- Սարգիս Մինասեան
- Տօքթ. Վ. Թորգոմեան
- Ստեփան Գարայեան
- Իսկ Գատըգիւղէն Տեարք՝
- Տօքթ. Պէննէ Թորոսեան
- » Մկրտիչ Արգարեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԲԱՂ. ԺՈՂՈՎՈՅ ԵՐԿՈՒ ԱՆԴՍՄՈՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչպէս զիտէք, Բաղ. Ժողովոյ տեղեկագրութեան վրայ՝ որոշած եւ օրակարգ անցուցած ենք երկու պակասեալ անդամոց ընտրութիւնը. կը հրաւիրեմ զձեզ, որ հաճիք ձեր քուէները տալ ընտրելի երկու անդամոց համար:

(65 քուէարկուներէն 33ական քուէով Բաղ. Ժողովոյ անդամ ընտրուեցան՝ Տրդատ պէյ Տատեան եւ Գրիգոր էֆ. Ադամեան: Ատենապետ էֆ. Ի դիւանէ հռչակեց կատարուած ընտրութեան արդիւնքը:)

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆԱՑ

ԱՏԵՆ. ԷՖ.— Տնտեսեան էֆ. առաջարկուիւն մը ունի ձեր ուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետևեալ գիրը).

Ազնուաշուք Ատենապետ էֆէնտի Պատկ. Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Գոհունակութեամբ տեսայ երեքշաբթի խորհրդակցական ժողովին մէջ թէ ներկայք համակարծիք էին ներքին կանոնագրին անողք գործադրութիւնը նկատելու իրր մեծ սատար մը Պատկ. Ժողովիդ աշխատութեանց արդիւնաւորման: Այդ միահամուռ փափաքէն թելադրուելով կը փութամ ներկայացնել յետագայ առաջարկներն:

Ա.— Ներքին կանոնագիրն տպել տալով, բաժնել երեսփոխանաց: Այսօր շատ դժուար խնդիր մ'է ի ձեռին ունենալ այդ կանոնագրին բնագիրն, որով ներկայ երեսփոխանաց մեծամասնութիւնը զիտակ չէ անոր արամագրութեանց եւ այդ անդիտակցութիւնը տեղի կուտայ թերութեանց եւ գիտողութեանց:

Բ.— Ամէն երեսփոխանէ պահանջել որ յատենի ժողովոյդ ուխտէ եւ խոստանայ յարգելու Ազգ. Սահմանադրութիւնը եւ հպատակելու ներքին կանոնագրին արամագրութեանց:

Յուսալով որ Պատկ. Ժողովդ պիտի հաճի նկատողութեան անել սոյն առաջարկներս եւ ստիպողականութիւն տալ անոնց, կը մատուցանեմ խորին յարգանացս հաւատարմութիւնս:

Իզմիրի երեսփոխան Լ. Ն. Տնտեսեան

Լ. ՏՆՏԵՍԵԱՆ ԷՖ.— Կը տեսնամ որ շատ ժամանակ, կանոնական մանրամասնութեանց համար խնդիրներ կը ծագին, եւ ժողովը երկար ատեն կը զոհէ անոնց, որովհետեւ շատերը անտեղեակ են կարգ մը ներքին կանոններէ, ուստի պէտք կ'զգամ առաջարկելու որ, մեր ներքին կանոնագրութիւնը նորէն տպագրելով, ցրուենք երեսփոխանաց:

Պ. ՓՄՓՄՁԵԱՆ ԷՖ.— Ներքին կանոնագրութիւնը մինչեւ հիմա չի տպագրուեցաւ. այն պատճառով որ նոր ներքին կա-

նոնագիր մը պատրաստելու համար ձեռնարկ եղած էր, եւ ժամանակ մը աշխատելէ յետոյ գործը կէս մնաց. արդ, ես անհրաժեշտ կը նկատեմ որ այդ աշխատութիւնը ամբողջանայ, եւ նոր ներքին կանոնագրութիւն մը ունենանք աւելի համապատասխան մեր պէտքերուն:

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՖ.— Նոր ներքին կանոնագրութիւն մ' ունենալու պէտքը հարկաչենք կրնար ժխտել, բայց այժմ գործագրուած կանոններն ալ գիտնալու պէտք ունինք. ուստի, այժմ գործադրութեան մէջ եղող ներքին կանոնագիրը պէտք է որ անպատճառ տպուի եւ ցրուի երեսփոխանաց:

Վ Օ Ր Ա Կ Ա Ր Գ Բ .

(Ատենապետ Յ. Պոյաճեան էֆ. անհանգստութեան պատճառով աստեղագրութեան աթոռը թողուց Պարգեւ էֆ. Փափազեանի որ առժամապէս վարեց այս պաշտօնը):

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՖ.— Գիտէք արդէն որ անցեալ նիստին ժողովս ընդունեց Երուսաղիմայ կանոնագրին ամբողջական ընդունութիւնը կատարել, Վարչութեան ներկայացուցած երեք յօդուածներուն նախապատուութիւն տալով. արդ, 4րդ յօդուածէն սկսելով՝ պիտի վիճարանինք ՅՁրդ եւ ՅՅրդ յօդուածներուն վրայ. պիտի խնդրեմ որ թեր ու դէմ խօսուածները երկար չըլլան, որպէսզի կարելի ըլլայ եզրակացութեան մը հասնել:

Տ. ՀՄԱՅԵԱԿ ԱՐՔԵՊՍ.— Ես ամիսփ կերպով միտքս պիտի բացատրեմ, այս 4րդ յօդուածի առժամեայ արամագրութիւնը բոլորովին աւելորդ կը նկատեմ. ասկէ զատ, պէտք է ժառանգաւորաց վարժարանի կարեւորութիւն տանք պէտք եղած կերպով: Երուսաղէմ միջազգային վայր մընէ, մեզի հետ ուրիշ ազգեր ալ կան, որոնք զարգացման տեսակետով աւելի բարձր դիրք մը ունին, ես պիտի առաջարկեմ որ ժառանգաւորաց վարժարանին մէջ իրենց ուսման ընթացքը աւար-

տող միտքաներէ անոնք որ ձեռնհասութիւն ունին, Երուսաղիմէն, եւ վերադառնալով աթոռ, անոր մատուցական վիճակը բարձրացնեն:

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ.— Ես միջանկեալ գիտողութիւն մը պիտի ընեմ, Ձեր ուշադրութիւնը հրաւիրելով կարեւոր կէտի մը վրայ: Ինչպէս գիտէք, այս կանոնագրին զանազան յօդուածներուն առթով Երեսփոխանական մասնաւոր խորհրդակցութիւններ տեղի ունեցան, բայց հոն կատարուած խորհրդակցութիւնները որոշում ըլլալու հանգամանքը չունին, այլ միայն ժողովին աշխատութիւնը զլրացնելու նպատակով եղած են, հետեւաբար, ժողովէն դուրս, մեր գոյացուցած եզրակացութիւնները պէտք չէ որ կաշկանդեն մեզի այստեղ մեր կարծիքը յայտնելու եւ մեծամասնութեամբ տալու ամէն որոշում:

ՏՕՔԹ. Խ. ՊՕՂՈՍԵԱՆ ԷՖ.— Ես կարծեմ թէ 4րդ յօդուածը շատ լաւ կերպով խմբագրուած է, եւ ժողովականք համամիտ պէտք է ըլլան մեզի, այս կէտին մէջ. միայն ֆիզիքական առողջութեան քով պէտք է աւելցուի «մտաւորական առողջութիւնն» ալ. ասկէ զատ, Յրդ պայմանով յիշուած առնուազն միջնակարգ կրթութիւնը պարտաւորիչ պէտք է ընել, որովհետեւ շատ Երուսաղէմ գացողներէ իմացած եմ որ միաբաններէն շատերը նախնական ուսումէ ալ զուրկ են: Այսպիսի մարդիկ անհրաժեշտ է որ դուրս հանուին վանքէն եւ այլեւս մեր այս նոր օրէնքին գործադրութիւնը պարտաւորիչ ըլլայ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ.— Անցեալ նիստին խօսեցայ արդէն, 4րդ յօդուածի առժամեայ արամագրութեան ջնջուելու պէտքին վրայ. այսօր նոյնը կը կրկնեմ, եւ կ'առաջարկեմ ջնջել այդ արամագրութիւնը, ասկէ վերջ Տօքթ. Պօղոսեան էֆ. ի յայտարարութեան համաձայն եմ, եւ եթէ վանքին մէջ կան այնպիսի անձեր որոնք

իրենց գոյութեամբ անպատուարեր են այդ հաստատութեան, հակառակ չենք ըլլար, որ անոնք հետացուին վանքէն:

Գ. ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԷՖ.— Ես պակասութիւն մը կը նշմարեմ կանոնագրին մէջ, եթէ արդենք թէ 2-3 միաբաններ անկարգապահութեան պատճառով դուրս պիտի հանուին վանքէն. ինչ ուղղութեան պիտի հետեւինք այսպիսի պարագայի մը մէջ. այս կէտը բոլորովին անորոշ կը մնայ եւ կրնայ դժուարութեանց պատճառ ըլլալ:

Տ. ՉԱՐՄՈՅՐ ՔՂՆՅ.— Երուսաղէմի գործոց կանոնաւորութեան համար պէտք եղածը մարդերն են. ըստ իս նախապատիւ պէտք է ըլլան այնպիսի մարդիկ, որոնք իրենց կատարած գործին գիտակցութիւնը ունին, մանաւանդ ո եւ է քննադատելի անցեալ չեն ունեցած. ասկէ զատ, անշուշտ ուշադրութիւն ընելու պէտք կայ, որպէսզի ապագային մէջ ալ այդ կարգի քննադատելի անձեր մուտ չունենան:

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ.— Օրէնքը յետադարձ ազդեցութիւն չունի, հետեւաբար մենք վաղուան կալմուելիք միաբանութեան համար է որ այս օրէնքը խմբագրած ենք. տարակոյս չկայ որ ժառանգաւորաց վարժարանը պիտի բարձրանայ եւ կարող չըջանաւորաներ պիտի պատրաստէ այս կերպով, կանոնին միջնակարգ կրթութիւն ստացած ըլլալու արամագրութիւնը արդէն իսկ գործադրուած պիտի ըլլայ. հետեւաբար, այս կէտին վրայ վիճարանութիւն կատարել աւելորդ կը նկատեմ:

Տ. ԵՂՆԻԿ ՎՐԴ. ՊԱՊԱՆԵԱՆ.— Կատարուած վիճարանութիւնը այնպէս կարծեցնելէ կուտայ ինձ թէ՛ Երուսաղէմի վրայ խօսողները այդ մասին բան մը չեն գիտեր, Միաբանութեան մէջ սարկաւազէն սկսելով մինչեւ Պատրիարքը միջնակարգ կրթութիւն ունին, չգիտեցած բաներնուս վրայ ինչ պէտք կայ խօսելու. հետեւաբար, առանց այլեւս երկարելու, կրնանք 4րդ յօդուածը ամբողջութեամբ ընդունիլ, ջնջելով առժամեայ արամագրութիւնը:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Տեղի ունեցած խորհրդակցութիւններէն կը հասկցուի որ առանց որոշ կերպով թափանցելու Խորհրդար. Յանձնաժողովոյ մտադրութեան զանազան մեկնութիւններ կը տրուին 4րդ յօդուածի առժամայ տրամադրութեան մասին, եւ կ'առաջարկուի վերջը նեղ Որպէս զի ցոյց տանք թէ ո եւ է յետին մտքով չէ դրուած այդ տրամադրութիւնը, մենք ալ կը համակերպինք որ ջնջուի առժամայ տրամադրութիւնը եւ առաջարկուի վարչութեան որ մէկ երկու յօդուածէ բաղկացած առժամանակեայ տրամադրութիւն մը բերէ, անոնց մասին՝ որոնք օրէնքի գործադրութեան արդելք կ'ըլլան: Խորհրդար. Յանձնաժողովս, այդ առանձին տրամադրութիւնները բերելու պայմանաւ առժամայ յօդուածին ջնջուելուն դէմ ո եւ է առարկութիւն չունի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Քանի որ Յանձնաժողովը վարչութեան կողմէ մէկ քանի յօդուածով առանձին տրամադրութիւններ բերուելու պայմանաւ կը համակերպի 4րդ յօդուածի առժ. տրամադրութեան ջնջման ուրեմն, այդ յօդուածը հետեւեալ ձեւին մէջ ձեր քուէքն կ'ենթարկեմ:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ 4րդ յօդուածը եւ ժողովը քուէքն մեծամասնութեամբ ընդունեց զայն.)

Յօդ. 4.— Միաբանութեան անդամներուն ընտրելութեան պայմաններն են.

- Ա. 21 տարիքը լրացուցած:
- Բ. Ֆիզիքական առողջութիւնը բժշկական վկայականով հաստատուած,
- Գ. Առնուազն միջնակարգ կրթութիւն ստացած,
- Դ. Ամբասիր վարքը ազգ. պաշտօնական մարմնէ մը վկայուած ըլլալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Հիմա ժողովիդ վաւերացման կ'ենթարկեմ ՅՁրդ յօդուածը:

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՍՐԲԱԶԱՆ.— Այսօր ժողովին մէջ Երուսաղէմի մատակարարութեան վրայ գործադրուելիք հակակշռի

մասին տարբեր կարծիք չկայ, զի առողջութիւնը միայն ձեւին դէմ է, ես կը տեսնամ որ այս նոր կանոնագրին տրամադրութեամբ բազմաթիւ մարդեր պիտի զրկենք Երուսաղէմ, հաշուակայներ, քարտուղարներ, ներկայացուցիչներ, որոնք գուցէ 50ական ոսկի ալ ամսական պիտի առնեն, եւ այս կերպով վանքին անձուկ պիտի տնայ վրայ 200 ոսկիի ամսական ծախք մը պիտի աւելնայ, ասիկա տարեկան 2400 ոսկույ զոհողութիւն մը բուել է. հաւատացողներ կան թէ՛ այս կերպով վանքը պիտի բարեկարգուի, Աստուած տայ, բայց առ այժմ ըլլալիք խոշոր զոհողութիւններն են որ աչքի առջեւ կը ներկայանան: Լաւագոյն մատակարարութեան համար, իմ խորհածս այն է որ վանքին մէջ ձեռնհաս եւ բարի անուն կրող մէկը գտնուի որ անտեսական մասին մէջ ծախքերը չափաւորէ, եւ մատակարարական գործոց հասար խորհրդատու եւ առաջնորդ ըլլայ: Ուրիշ դիտելի պարագայ մ'ալ կայ, կալուածապետը, մատակարարը, համարակալը պիտի հաստատուին Քաղ. ժողովէն: Երուսաղէմ 17 դարու գոյութիւն ունեցող վանք մըն է, հետեւաբար ընաւ բանաւոր չէ որ անոր համար ընտրուելիք պաշտօնեաները միմիայն աշխարհականաց քուէովը ընտրուին, հետեւաբար կ'առաջարկեմ որ փոխանակ Քաղ. ժողովոյ՝ Խառն ժողովոյ ըսուի նոյն յօդուածին մէջ:

ՅԱԿՈՅ ԱԻԵՏԻՍԵԱՆ ԷՖ.— Կը տեսնամ որ ժողովին մէջ մտաւախութիւն մը կը տիրէ, թէ՛ չ'պիտի կրնան ընտրուիլ կարող մարդեր. այս պարագան ինծի կը թելադրէ որ, երբ հակակշռի մարմինն գոյութիւնը կ'ընդունինք, միեւնոյն ժամանակ քուէարկուին նաեւ այնպիսի նըպատակայարմար յօդուածներ, որոնք մեր կատարելիք հակակշռին աւելի ուժ տան:

ՏՕՔԹ. Ս. ԹԷՐԶԵԱՆ ԷՖ.— Երուսաղէմի վանքին մատակարարութեան վե-

րաբերեալ այն երկու յօդուածները որոնց քուէարկութեան առաջնութիւն տուինք, կը պարտաւորեն մեզի անդրադառնալու այն հիմնական սկզբունքներուն որոնք քուէարկուեցան ասկէ առաջ, նախ եւ առաջ ՅՁրդ յօդուածը նկատողութեան առնելով, կը տեսնենք որ անոր մէջ նշանակեալ պաշտօնեաները միաբան կամ ոչ միաբան ըլլալու մասին ո եւ է յիշատակութիւն չկայ, եթէ հիմնական երեք յօդուածներուն ընդունուած ըլլալուն ակնարկութիւն ըլլայ, կը յիշեցնեմ որ, արդէն երեք ամիս, անցած ըլլալուն համար, ժողովը եթէ ուզէ, կրնայ այդ մասին տուած իր որոշումը ջնջել եւ խորհիլ նոր միջոցի վրայ. դառնալով բուն խնդրոյն ՅՁ եւ ՅԾրդ յօդուածներու տրամադրութեան պիտի կազմենք մարմին մը, որուն պաշտօնին զօրութեամբ, Երուսաղէմի մէջ, ո'չ միաբանական եւ ո'չ ալ Եկեղեցական հանգամանք կը մնայ եւ վանքին անտեսական եւ ելմտական խնդիրներով Եկեղեցականները այլեւս զբաղելու իրաւունք չեն ունենար: Երուսաղէմ դարաւոր գոյութիւն ունեցող հողեւոր հաստատութիւն մընէ եւ իր ներքին մատակարարութիւնը, այս կերպով իրմէն առնելու իրաւունք չեմ տեսնար ես, որովհետեւ սահմանադրութեան ալ, մեզի տուած իրաւունքը նոյն իսկ պարզ վանքերու համար, վերին հսկողութեան իրաւունքն է մինչդեռ մենք ուղղակի մանրամասնութեանց մէջ է որ կը մտնենք: Եթէ սկիզբէն այս վերին հսկողութեան իրաւունքը գործադրուած ըլլար ոչ այդ ծայրայեղ մակուսները տեղի կ'ունենային եւ ո'չ ալ այն զեղծումները կը պատահէին, որոնք տասնեակ տարիներէ ի վեր կը զբաղեցնեն ազգը. ուրեմն այս ամէնը տեղի ունեցան այն պատճառաւ որ Եկեղեցին իր պարտականութիւնը չէ կատարել ժամանակին. ուստի, այս պարագան իրաւունք չտար մեզի Երուսաղէմի կանոնագրին մէջ այս փոփոխութիւնները ի գործ դնելու, այս

տեսակէտով, ես պէտք կը տեսնամ գործադրել կէտ առ կէտ, սահմանադրական տրամադրութիւնները, որպէս զի թէ՛ օրէնքը բարձր բունած ըլլանք եւ թէ կանոնագրի մէջ մեր մտցուցած փոփոխութիւնները վրաս առաջ չբերեն, ու միեւնոյն առն Երուսաղէմի խնդիրը գոյութիւն ունենալէ դադրի. մենք Յանձնաժողով մը կազմեցինք, որ բարեփոխեալ ծրագիր մը բերաւ մեզի, ես այն համոզումը ունիմ որ այդ ծրագրին մասնաւորապէս քանի մը յօդուածները կը հակասեն Սահմանադրութեան. անտեսական մարմնոյն տեղ պէտք կը տեսնամ որ մեր հակակշռի իրաւունքը գործադրենք:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Դիւանը իրաւունք չունէր այս կերպ վիճաբանութեան թոյլտուութիւն ընելու, քանի որ սկզբունքը վէճի առարկայ չէ, ու խնդիրը կը կայանայ յօդուածի բովանդակութեան վրայ: Այս Տնտես. Մարմնոյն՝ միաբանութեան ընտրուելու չընտրուելու խօսք չկայ, այլ միաբանութիւնը անտեսական մատակարարական գործի մէջ չխառնելու խնդիր կայ. քանի որ այսօրուան դառնագոյն վիճակին պատասխանատուն իրենք են, եւ դոյացած 40,000 ոսկի պարտքը, անտեսական յոռի մատակարարութեան արդիւնք է. օրէնքին տրամադրութիւնը այն է որ անտեսական մատակարարութիւնը բաժնուի հոգեւորական գործերէն: Օրէնքին մէջ աշխարհականի Եկեղեցականի խօսք չկայ եւ այդ մասին օրինական տրամադրութիւն ալ չկայ, այլ թէ՛ որ կարգի պաշտօնեայք ինչ պաշտօններով պիտի զբաղուին, օրինակի համար, համարակալը կամ կալուածապետը անհրաժեշտ է թէ ոչ, այս կէտերն են որ խորհրդակցութեամբ պիտի որոշուին այս տեղ. հետեւաբար, պիտի խնդրէի որ ազատելու համար ժողովս անօգուտ վէճերէ, ասիթ չարուէր խնդրէն դուրս վիճաբանութիւններու:

Հ. ԽՕՃԱՍՍՐԵԱՆ ԷՖ.— Ես Շահրիկեան էֆ. տեսութիւնները ընդունելով հանդերձ, կը փափաքիմ որ բացատրութիւն մը տամ Թէրզեան էֆ.ի, որ կ'ըսէր թէ երեք ամիս անցնելէն յետոյ կարելի է բեկանել Երուսաղէմի խնդրին համար տրուած որոշումը. ասիկա բացարձակ սխալ մըն է եւ այս տրուած որոշումը այն կարգի որոշումներէն չէ, որովհետեւ եթէ այդպէս ըլլայ, քուէարկուած ուրիշ օրէնք գործադրողին համար Յ ամիս յետոյ միշտ փոփոխելի ըլլալով, եթէ ուղէ կը գործադրէ եթէ չուղէ չգործադրեր: Արդէն միաբանութեան շահը կը պահանջէ քուէարկուելիք այս օրէնքին գործադրութիւնը, քանի որ ասոր մէջ յարգուած են, Տնօրէն Խորհուրդի իրաւասութիւնները, եւ այդ մարմինն է որ պիտո՞ճէն պիտի պատրաստէ: Երկրորդ՝ Տօքթ. Թէրզեան էֆ. Վանօրէից Խորհրդոյ իրաւասութեան մասին ալ սխալ ըմբռնում ունի, որովհետեւ, եթէ իր կարծածին պէս ըլլար, սահմանադրական սկզբունքներու հակառակ պիտի ըլլար, որովհետեւ Սահմանադրութիւնը իրաւունք կուտայ Ընդհ. Ժողովոյ ընտրելու Պատրիարքը, եւ հետեւաբար հակելու անոնց գործունէութեան: Այդ իրաւունքին գործադրութիւնն է որ կը կիրարկէ Ազգ. Ժողովը, եւ զիտելի է որ երբ կեդրոնի իշխանութիւնը վանքին վրայ ունեցած իր հակակշիռ իրաւունքին մէջ թերացած է՝ այդ պարագային է որ Երուսաղէմի մէջ աւելի անկարգ եւ քննադատելի վիճակ տիրած է: Նոր կանոնադրով միաբանութեան ամենամեծ իրաւունքը տրուած է, որովհետեւ այն է որ պիտո՞ճէն պիտի կազմէ, իսկ Ազգ. Ժողովը հակողի եւ վերահսկողի իրաւունքը պիտի գործադրէ. միակ եթէ բան մը կայ, այն ալ անտեսական մատակարարութեան իրաւունքն է որ առնուած է իրմէ:

Գ. Բ. ԷՖ. ԶՕՀՐԱՊ.— Ես շատ պայծառ կերպով չեմ յիշեր թէ այս կանոնագրի պատրաստութեան առիթ տուող պարագան ինչ է, բայց ինչ որ հասկցայ ատենաբաններու խօսքերէն, մատակարարութիւնը

առնուած է միաբանութեան ձեռքէն: Ես սկզբամբ հակառակ չեմ այս մատակարարութիւնը առնուելուն, սա պարզ պատճառով որ ամէն շտապ մարդու ձեռքէն կ'առնուի ուրիշ է մատակարարութիւն մը, ուր կը մնայ ազգին ստացուածքին մատակարարութիւնը: Եթէ միաբանութիւնը ուրիշ զօգոնութիւն ունենայ այս կարգադրութենէն, պէտք է յիշէ որ ինք հրաւիրեց այս անօրինութիւնը իր վրայ. մանաւանդ որ արդէն նոր սեղմում մը գործադրուած չունի, եւ կեդրոնը իրաւունք ունի հակակշիռ կիրարկելու գոնէ որոշ ժամանակի մը մէջ, վերջ տալու համար յոռի մատակարարութեան արդիւնքներուն, բայց որպէս զի բառը չի խրաչեցնէ, կ'առաջարկեմ հակակշիռ մարմինը փոխել Խնամակալութեան:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Հակակշիռ մարմին զրուելուն պատճառը այն է որ Երուսաղէմի ընդհանուր մատակարարութեան հակակշիռն է որ ի գործ պիտի դնէ: Տնտեսական եւ ուսումնական մարմիններէն դատ, վերահսկող մարմինը մը պէտքը կայ եւ անոր պաշտօնը աւելի որոշ հասկցուելու համար այս բացատրութիւնը գործածել աւելի նպատակայարմար դատուեցաւ:

Տ. ԶԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ.— Քիչ առաջ առաջարկուեցաւ նաեւ որ Խնամակալութիւնը ընտրուի փոխանակ Քաղ. Ժողովէն Խառն Ժողովէն, ես պէտք կը զգամ անգամ մ'ալ կրկնելու այդ պէտքը, որովհետեւ վանական խնդիրներ կան որոնցմով պիտի զբաղի Խնամակալութիւնը. հետեւաբար անոր ընտրութեան առթիւ Խառն Ժողովոյ հաւանութիւնը կարեւոր է:

Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ ԷՖ.— Արդէն Սահմանադրութեան մէջ Վանօրէից եւ Դատաստանական Խորհրդոց կազմութիւնը Խառն Ժողովոյ տրուած է իրենց պաշտօնին ընտրութեան համար. ես կ'առաջարկեմ չչեղիլ Սահմանադրութենէն, եւ այս Խնամակալութեան կազմութիւնն ալ թողուլ Խառն Ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խնամակալութեան կազմութիւնը Խառն Ժողովէն կատարելու առաջարկը քուէի կը դնեմ, որոնք որ կ'ընդունին ձեռամբարձ յայտնեն իրենց հաւանութիւնը:

(Քուէարկութիւն կատարուելով Ժողովը 14ի դէմ 25 քուէով որոշեց Խառն Ժողովէն կատարել սոյն ընտրութիւնը:)

ԱՏԵՆ. ԷՖ.— Ուրեմն ՅՁրդ յօդուածը ընդունուած է հետեւեալ ձևով:

Յօդ. 32.— Ս. Յակոբեանց վանքի ու անոր ենթակայ Ս. Տեղեաց եւ հիմնարկութեանց յատուկ անտեսական մարմինը կը կազմուի:

1. Կաղաւթասպետ
2. Մասակարար
3. Հաւատարմարկ:

Որոնք կ'ընտրուին Ազգ. կեդր. վարչութիւնէն կարգուած Երուսաղէմի յատուկ Խնամակալութեան կողմէ եւ կը հաստատուին կեդր. վարչութեան Խառն Ժողովէն:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ.— Ժողովի այս քուէարկութենէն յետոյ՝ զարձեալ պէտք կը զգամ բացատրութիւն մը տալու, մեր անսակէտը այս կանոնագրի պատրաստութեան առթիւ եղած է վանքին նիւթական ստացուածոց անկորուստ պահպանութիւնը, օրինակի համար, գանձարանը ուրիշ աշխարհական չմտնար ըստ վաղեմի սովորութեան բացի լուսարարապետէն: Միաւրի շրջանի մը մէջ կը կարծուէր թէ գանձարանը իր էութեան մէջ պէտք է պահուած լայ, բայց կարելի չէ հաւատալ թէ չորուստ մնացած են վանքին նիւթական հարստութիւնը, որ պէտք է միլիոններու հասած ըլլայ, ազգը պիտի դիտնայ թէ ինչ ունի, թէ գոյքի ցանկ կա՞յ, թէ աղամանդազարդ զգեստներ եւ անօթներ ինչ արժէքներ կը ներկայացնեն, որպէս զի քարերու փոփոխութեան առջեւը առնուի, այդ գանձարանը թանգարան մ'է որուն պահպանութեան իրաւունքը

ազգին կը վերաբերի: Թող արարողութիւնները կատարուին ինչ կերպով որ կ'ուղէ տեղ ոյն հողեւոր վերին իշխանութիւնը, ահա բոլորը այս է:

Պ. ՓԱՓԱՉԵԱՆ ԷՖ.— Այս մասին համառոտ բացատրութիւն մը տամ, իրբեւ պատուիրակ Երուսաղէմ գտնուած ատենս մտած եմ գանձարանը եւ ցուցակագրութեան մը ձեռնարկուած է, բայց չեմ գիտեր թէ ինչ եղած է իմ մեկնելէս յետոյ:

Տ. ՀՄՍՅԵԱԿ ԱՐՔԵՊՍԿ.— 60 տարի առաջ ես Երուսաղէմ գտնուած եւ լսած եմ որ Բագրատունեանց, Ռուբինեանց օրերէն մնացած յիշատակներ կան գանձատան մէջ, որոնք կը պահուին ցարդ. մենք հիմա, գանձատունը ձեռք պիտի առնենք, արդեօք ասկէ վերջ հակողներու օրով գոնէ այնքան երկիւղածութեամբ պիտի կրնան պահուիլ հոն գտնուած հնութիւնները:

Տ. ԵՂԵԻԿ ՎՐԴ.— Տնօրէն Ժողովին պաշտօնն է մի միայն կրօնական գործերը, իսկ Տնտեսական պաշտօնները թոշակաւ որ անձերու պիտի յանձնուին ըսուած է, եւ բնականաբար, ասոնց պիտի տրուին այնպիսի թոշակներ որոնց գումարը տարեկան 2000 ոսկիի պիտի յանձնուի: Ես բոլորով սրտիւ կ'ընդդիմախօսեմ ասոր. եւ կ'առաջարկեմ որ արձանագրուի, քանի որ, Երուսաղէմի նուիրական անօթներու եւ գոյքերու ցուցակագրութիւնը պարզ շուկայի գործառնութեան մը վերածել չկրնար յարմար դատուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Թեր ու դէմ բաւական կարծիքներ յայտնուեցան, հետեւաբար ՅՁրդ յօդուածն ալ ձեր քուէին կ'ենթարկեմ անոնք որ կ'ընդունին ձեռամբարձ յայտնեն իրենց հաւանութիւնը:

Ժողովը Յի դէմ 27 քուէով ընդունեց ՅՁրդ յօդուածը հետեւեալ կերպով:

Յօդ. 36.— Տնտեսական մարմին պաշտօնն է Երուսաղէմի մէջ կամ այլուր Ս. Յակոբեանց վանքի ունեցած կալուածոց

վարչութիւնը, եկամուտներու եւ նուիրատուութեանց գանձումն ու անտեսութիւնը, սնունդի եւ հանդերձեղէնի, վառելիքի եւ լուսավառութեան եւ այլ ծախքերու մատակարարութիւնը, թոշակներու վճարումը, վանական ամբողջ երեսմուտքի յանձանձումն եւ հաշուակալութիւնը, վերջապէս վանքին բոլոր գոյքերուն եւ հարստութեան պահպանութիւնն ու զարգացումը.

Տնտեսական մարմինը կը մասնակցի նաեւ վանուց Ուսումնական մասի վարչութեան՝ խառն մարմնի մաս կազմելով:

ԱՏԵՆ. ԷՖ.— Այս երեք յօդուածները կը հաղորդենք վարչութեան անմիջապէս գործադրուելու համար, պահանջելով որ Էրզ յօդուածի առժամեայ տրամադրութեան տեղ ժողովին որոշման համաձայն ծրագիր մը բերուի:

(Ատեանը վաղուցեայ ժամը 6 ին)

Ատենադպիր Ատենապետ
Հ. Արամեանց Յ. Պոյանեան

(Գ. Վիճակ)

- Գում գարու, Գումգարուի դուրս
69. Դաւիթ Էֆէնտի Տէր-Մովսէսեան
70. Համբարձում » Պոյանեան
71. Սարգիս » Սուխ
72.

Կէտիկ վաշա

73. Հմայեակ Էֆէնտի Արամեանց
74. Յարութիւն » Հանկիւլեան
75. Յակոբ » Աւետիսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գեորգ

78. Գրիգոր Էֆէնտի Զօհրապ
79. Լեւոն » Սամսեան
80. Հայկ » Խօճասարեան
81. Պարգև » Փափազեան
82. Լեւոն » Սեղբոսեան
83. Ռուբէն » Փափազեան
84:

(Ե. Վիճակ)

Գուգլուն-Տուկ-Իճատիէ

85. Երուանդ Էֆէնտի Խորասան
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ոսկան » Մարտիկեան
89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թփ-գարու

90. Գեորգ Էֆէնտի Սիմէշեան
Ղալաթիա-Պէլքոզ

91. Երուանդ Էֆէնտի Օտեան

Նաուլը-գարու

92. Նշան Էֆէնտի Գալպեան
93. Տիգրան » Մանուէլեան

Սամաթիա Ալթըմէրմէր

94. Պետրոս Էֆէնտի Գալփեան

Սկիւտար Ս. Խաչ

95. Բարսեղ Էֆէնտի Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրէնկիւլեան
96. Յակոբ » Մինասեան

Րումէլի-Յիսար, Պոյանը-գիւղ, Եէնի-գիւղ

100. Աբրահամ Էֆէնտի Տէր Յակոբեան

ԳԱՒԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԵԱՆԻ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

101. Վահան Էֆէնտի Թէքեան

Եւդոկիա

102. Յակոբ Էֆէնտի Պօնճուգեան

Խարբերդ

103. Տօրթ. Փաշայեան Էֆէնտի

Կարին

104. Սողոմոն Էֆէնտի Տէր-Ազարեան

Կիւրին-Մանճըթ

105. Աբամ Էֆէնտի Անգոնան

Մուշ

106. Գեղամ Էֆէնտի Տէր-Կարապետեան
Զմշկաձագ-Չարսանճագ

107.

Տրապիզոն

108. Օննիկ Էֆէնտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

109. Ա. Վուամեան Էֆէնտի

Բալու

110. Գամէր Էֆէնտի Շիրինեան

Եօզղատ

111. Աւետիս Էֆէնտի Ճինիվիզեան

Կեսարիա

112. Վահան Էֆէնտի Էստեան

Հալէպ-Այնթապ

113. Սարգիս Էֆէնտի Գնասեան

Նիկոմիդիա

114.

Պաղատա

115. Տօրթ. Ներսէս Էֆէնտի Թիւլեան

Սղերդ

116. Սերովբէ Էֆէնտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ալն

117. Ատովմ Էֆէնտի Երեցեան

Արարկիր

118. Արթաթի Էֆէնտի Սարափեան

Եղեսիա

119. Սեպուհ պէյ Իւթիւսեան

Զզմիւռնիա

120. Լեւոն Էֆէնտի Տնտեսեան

Հաճըն

121. Տէվլէթ Էֆէնտի Տատրեան

Մալաթիա

1 2.

Պանտրմա-Պալքէսիլը

123. Տիրան Էֆէնտի Երկանեան
Վան

124.

(Գ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

125.

Ատանա

126. Արիստակէս Էֆէնտի Գասպարեան

Բաղէշ

127. Աղեբեանդը Էֆէնտի Փանոսեան

Կուտինա—Ափիօն-Գարա-Յիսար

128. Զարեհ Էֆէնտի Խորասանեան



- | | |
|---------------------------------|--------------------------------------|
| Պրուսա | Գաղատիա |
| 129. Գասպար էֆէնտի Նեմցէ | 135. Տր. Խաչիկ էֆէնտի Պողոսեան |
| Ռօտտութօ | Գոնեա |
| 130. Միհրդատ էֆէնտի Հայկազն | 136. Բարթող էֆէնտի Զօրեան |
| Տիգրանակերտ | Երզնկա |
| 131. Տիգրան էֆէնտի Նազաշեան | 137. Գաբրիէլ էֆէնտի Նորատունկեան |
| Տիվրիկ | Մարաշ-Ջէյթուն |
| 132. | 138. Սմբատ էֆէնտի Բիւրատ |
| (Ե. Վիճակ) | Շապին-Գարախիսար |
| Ամասիա-Մարգրուան | 139. Ժագ էֆէնտի Սայապալեան |
| 193. Տիգրան էֆէնտի Մարտիկեան | Սերաստիա |
| Բարերդ | 140. Տօրթ. Նազարէթ էֆէնտի Տաղաւարեան |
| 194. Յարութիւն էֆէնտի Դարբինեան | |

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- | | | | |
|-------------|--------------------------|--------------|------------------------|
| Ա. Ատննապետ | Գաբրիէլ էֆ. Նորատունկեան | Ա. Ատննադպիր | Հմայեակ էֆ. Արամեան |
| Բ. » | Տր. Տաղաւարեան էֆէնտի | Բ. » | Երուանդ էֆ. Պէյազճեան |
| Գ. , | Պարգէս էֆ. Փափազեան | Գ. ,, | Աղեքսանդր էֆ. Փանոսեան |

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Զ Դ Ի Ի Ա Ն Ք

ՉԵՌՆՀՍՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Գիմաքսեան
- Բ. Արամ էֆէնտի Հալաճեան
- Գ. Արշակ էֆէնտի Ալպոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Աստուածատուր էֆէնտի Խաչատրեան
- Բ. Մարկոս էֆէնտի Նաթանեան
- Գ. Հրանտ էֆէնտի Ասատուր

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

- Ա. Պենոն էֆէնտի Տէլիբմէնճեան
- Բ. Վահան էֆէնտի Էսաեան
- Գ. Թորգոմ էֆէնտի Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Եղուարդ էֆէնտի Շիրինեան
- Բ. Խաչիկ էֆէնտի Սրվաճեան
- Գ. Լեւոն էֆէնտի Տնտեսեան

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Յարութիւն էֆէնտի Մոսախչեան
- Բ. Բարսեղ էֆէնտի Աւետիսեան
- Գ. Նշան էֆէնտի Գարպճեան

ԻՐԱԻԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
- Բ. Գարեգին էֆէնտի Տէմիրձիպաշեան
- Գ.

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Դաւիթ էֆէնտի Տէլի-Մովսէսեան
- Բ. Հայկֆ է. Էնտիլ Խօճասարեան
- Գ. Յարութիւն էֆէնտի Շահրիկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Բարթող էֆէնտի Զօրեան
- Բ. Վահան էֆէնտի Թէքեան
- Գ. Ռուբէն էֆէնտի Զարդարեան

ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ի Շ

Սեփականութիւն Ա.գգ. Սնտուկիճ, Ա.գգ. Ժողովոյ ծախուց յասկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաքիոյ